# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 1

2024թ. օգոստոսի 19-ին ժամը 16:00-ին ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի վարչական շենքում տեղի ունեցած «Կրուստա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված Գեղարդի անդեզիտաբազալտի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ հանրային քննարկումների /1-ին փուլ/ վերաբերյալ.

19.08.2024թ.

Հանրային քննարկմանը մասնակցում էին ՀՀ Կոտայքի մարզի Գառնի համայնքի ղեկավար Տ. Պողոսյանը, «Կրուստա» ՍՊԸ-ի տնօրեն Վ. Լուլուկյանը, «Կրուստա» ՍՊԸ-ի ներկայացուցիչ-նախագծող խմբի անդամ Վ. Ավետիսյանը, համայնքի բնակիչներ:

Նիստը վարեց համայնքի ղեկավար Տ. Պողոսյանը և ողջունելով ներկաներին, նշեց, որ «Կրուստա» ՍՊԸ-ն դիմել է Գառնի համայնքի ղեկավարին՝ Գեղարդի անդեզիտաբազալտի հանքավայրի օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքների վերաբերյալ հանրային քննարկումներ /1-րդ փուլ/ կազմակերպելու համար և խոսքը փոխանցեց ընկերության ներկայացուցիչներին:

Ընթացակարգի և նախատեսվող գործունեության վերաբերյալ ելույթ ունեցավ Վ. Ավետիսյանը, նշվեց որ հանրային լսումներն իրականացվում է <<Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին>> ՀՀ օրենքին համապատասխան և նախատեսվող գործունեությունը դասվում է Ա կատեգորիայի: Վ. Ավետիսյանը ներկայացրեց նախատեսվող գործունեության նպատակը, որոշակի տեղեկատվական տվյալներ, ինչպես նաև նախատեսվող բնապահպանական միջոցառումների մասին: Այս հանրային քննարկման արդյունքներով վերջնական արդյունահանման նախագիծը և Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությունը կկազմվի և կներկայացվի Լիազոր մարմնին:

Ելնելով հանքավայրի տեղադիրքից հանքամարմնի տեղադրման պարամետրերից և մակաբացման ապարների ոչ մեծ ծավալներից, հանքավայրի մշակումը նախատեսվում է բաց լեռնային աշխատանքներով, առանց հորատապայթեցման աշխատանքների կիրառման: Հայցվող տարածքը նախկինում չի շահագործվել: Բացահանքում աշխատանքները նախատեսվում է կատարել շուրջտարի: Աշխատանքային օրերի քանակը ընդունվում է 260 օր տարում: Աշխատանքային հերթափոխերի քանակը օրում ընդունվում է

ı, հերթափոխի տևողությունը - 8.0 ժամ: Բացահանքի ծառայման ժամկետը՝ 20 տարի: Ներկայացվեց նաև սոցիալական ծրագրերի հետ կապված հարցեր:

Հարց ու պատասխանին մասնակցեցին նաև համայնքի բնակիչները:

Քննարկման մասնակիցների կողմից չեղան դիտողություններ և հարցեր, ներկա գտնվող համայնքի բնակիչները ողջունեցին նախատեսվող գործունեությունը:

Քննարկումների պատասխանատու՝

Համայնքի ղեկավար՝ Տ. Պողոսյան

«Կրուստա» ՍՊԸ տնօրեն՝ Վ. Լուլուկյան